Հավելված N 2
2025 թվականի հունվարի «22»-ին կնքված
«ԴՏՊ-1141-11020ԱՀ/25/ԳՄՃ» պայմանագրի

ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ N 1

1. Ընդհանուր տեղեկատվություն

| | |
|---|---|
| Միջոցառման անվանում | Հաշմանդամություն ունեցող երեխաների տնային խնամքի ծառայություններ |
| Դրամաշնորհի N | «ԱՍՀՆ-ԴՄ-ԵՏԽԾ-25/11-1»<br>Մարզ՝ Գեղարքունիք |
| Դրամաշնորհատու կազմակերպություն | ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն |
| Դրամաշնորհառու կազմակերպություն | «Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպություն |
| Միջոցառման իրականացման ժամանակահատված | 01.01.2025 - 31.12.2025 |
| Հաշվետու ժամանակահատված | 01.01.2025 – 31.03.2025 |
| Ներկայացման օր | 10.04.2025 |
| Հաշվետվության պատասխանատու<br>(անուն, ազգանուն, պաշտոն) | Նունե Արշակյան, սոցիալական աշխատող |

2. Բովանդակային հաշվետվություն

2.1. Խնդրում ենք թվարկել աշխատանքային պլանով և պայմանագրի թիվ 1 և թիվ 7 հավելվածներով սահմանված միջոցառումների (այսուհետ՝ միջոցառում) շրջանակում կատարման ենթակա գործողությունները հաշվետու ժամանակահատվածի համար:

Հաշվետու ժամանակահատվածի համար կատարման ենթակա գործողություններն են՝

1. Կենցաղային սպասարկում
2. բժշկական օգնություն և սպասարկում
3. սոցիալ-հոգեբանական օգնություն

2.2. Խնդրում ենք նկարագրել միջոցառման առաջընթացն՝ ըստ սահմանված աշխատանքային պլանի (Գանտի աղյուսակ) և միջոցառումների, նշելով՝ Ձեր կողմից իրականացված գործողությունները և ստացված արդյունքները հաշվետու ժամանակահատվածի համար: Որքանով են նշված գործողությունները նպաստել տվյալ միջոցառման խնդիրների/նպատակի իրականացմանը:

Digitally signed by
MKHITARYAN
YERVAND
2508730335
Date: 2025.04.10
14:57:13 AMT

Հաշմանդամությույն ունեցող երեխաների տնային պայմաններում խնամքը, համաձայն գնահատված սոցիալական կարիքի և առողջական վիճակի, շահառուներին տրամադրվել է կենցաղային սպասարկման, բժշկական օգնության և սպասարկամ, սոցիալ-հոգեբանական, խորհրդատվական աջակցության տեսքով:

Ընդհանուր առմամբ, հաշվետու ժամանակահատվածում ծրագրի ծառայություններից օգտվել է հաշմանդամություն ունեցող 37 երեխա:

Ծառայությունների տեսակները և տրամադրման հաճախականությունը որոշվել են բազմամասնագիտական թիմի կողմից՝ հաշվի առնելով հաշմանդամություն ունեցող երեխաների փաստացի կարիքները, առողջական վիճակը և կենսագործունեության կամ ֆունկցիոնալության սահմանափակման աստիճանը:

Տնային պայմաններում խնամքի ծառայություններ մատուցող բազմամասնագիտական թիմը բաղկացած է սոցիալական սպասարկողներից, սոցիալական աշխատողներից, հոգեբաններից, բուժքույրերից: Անհրաժեշտության դեպքում, ըստ շահառուի անհատական կարիքի, տրամադրվել են նաև այլ մասնագիտական ծառայություններ՝ մասնավորապես՝ բժշկի, ով վարել է անհատական բժշկական գործեր և սոցիալական տաքսիի, որի օգնությամբ երեխաները տեղափոխվել են համայնքում առկա Առաքելություն Հայաստան ԲՀԿ ցերեկային կենտրոն՝ մասնագիտական ծառայություններ ստանալու, ինչպես նաև թերապևտիկ խմբակներին մասնակցելու նպատակով:

***Հաշմանդամություն ունեցող երեխաների կենցաղային սպասարկում և խնամք***

Հաշմանդամություն ունեցող երեխաները սոցիալական սպասարկողների կողմից ստացել են կենցաղային սպասարկման ծառայություններ, որն ուղղված է եղել նրանց ինքնասպասարկման և կենցաղավարման աջակցմանը: Մասնավորապես սոցիալական սպասարկողի կողմից երեխաները ստացել են անձնական հիգիենայի ապահովման, անհրաժեշտության դեպքում՝ կերակրման ծառայություններ:

***Բժշկական օգնություն և սպասարկում***

Հաշմանդամություն ունեցող երեխաներին տրամադրվել է նաև բժշկական օգնություն, ինչի արդյունքում հնարավոր է եղել վերահսկել նրանց առողջական վիճակը, արագ արձագանքել առողջապահական կարիքներին:

Ծրագրում ներգրավված բժիշկը կիզակետում է պահել այն դեպքերը, որոնք առավել ուշադրության կարիք են ունեցել: Անհրաժեշտության դեպքում իրականացվել են ուղղորդումներ և/կամ ուղեկցում պոլիկլինիկա կամ այլ բժշկական հաստատություններ:

***Սոցիալ-հոգեբանական օգնություն***

Սոցիալական աշխատողների կողմից, իրականացվել է կարիքի գնահատում, որի հիման վրա որոշվել է շահառուին տրամադրվող ծառայությունների շրջանակը: Երեխայի և ընտանիքի կարիքների գնահատումը իրականացվել է տնայցերի միջոցով:

Առաջնային տնայցեր և կարիքի գնահատումներ են իրականացվել 56 հաշմանդամություն ունեցող երեխայի համար, որոնցից 37-ը ներառվել են ծրագրում:

Վերհանված կարիքներից ելնելով՝ սոցիալական աշխատողների կողմից ընտանիքներին տրամադրվել է սոցիալական խորհրդատվություն, իրականացվել են ուղղորդումներ: Կարիքի գնահատման և բազմամասնագիտական թիմի քննարկման հիման վրա, յուրաքանչյուր շահառուի համար կազմվել է սոցիալական զարգացման ծրագիր: Համալիր կարիքների հայտնաբերման դեպքում սոցիալական աշխատողների կողմից իրականացվել է դեպքի վարում, որն իր մեջ ներառել է՝ սոցիալական դեպքի փաստաթղթավորված ամբողջական փաթեթ, միջամտության պլանի կազմում, սոցիալական խորհրդատվության, անհրաժեշտ տեղեկատվության տրամադրում, ուղղորդումների իրականացում, մշտադիտարկում և շարունակական վերահսկողություն: Սոցիալական աշխատողի կողմից տրամադրված խորհրդատվության արդյունքում շահառուները և նրանց ընտանիքի անդամները ստացել են իրենց իրավունքների ու շահերի պաշտպանության վերաբերյալ տեղեկատվության տրամադրում, անհրաժեշտ սոցիալական աջակցության կազմակերպում, ինչպես նաև ստացել են աջակցություն հաշմանդամության փաստաթղթավորման հարցում:
Սոցիալական աշխատողների ուշադրության կիզակետում են եղել երեխաների կրթությունից դուրս մնալու դեպքերի հայտնաբերումը, համապատասխան միջամտության իրականացումը և նրանց՝ կրթական համակարգում ընդգրկվածության ապահովումը, ինչպես նաև երեխայի ընտանիքում ապրելու իրավունքի իրացումը՝ բոլոր հնարավոր դեպքերում:
Հոգեբանական խորհրդատվություն է տրամադրվել հաշմանդամություն ունեցող երեխաներին, ինչպես նաև նրանց ընտանիքի անդամներին, մասնավորապես ծնողին: Հոգեբանական աջակցությունն իրականացվել է անհատական հանդիպումների տեսքով, որոնք իրականացվել եք պարբերաբար և միտված են եղել հաշմանդամություն ունեցող երեխաների և/կամ նրա ընտանիքի անդամների հոգեբանական կայուն վիճակի պահպանմանը, սթրեսակայության ձևավորմանը և/կամ պահպանմանը և այլ բացահայտված կարիքներին:
Ըստ մասնագետների կողմից բացահայտված կարիքի՝ հաշմանդամություն ունեցող երեխաների մեծ մասը սոցիալական սպասարկողների կողմից ուղեկցվել են համայնքում առկա ցերեկային խնամքի կենտրոններ՝ շահառուների սոցիալականացմանը, շփման հմտությունների զարգացմանը նպաստելու և սոցիալական մեկուսացումը կանխարգելելու համար: Շահառու երեխաները մասնակցել են կենտրոնում գործող տարբեր խմբակների, իսկ արտթերապևտիկ ծառայությունները օգնել են շահառուներին գիտակցել և արտահայտել իրենց զգացմունքները:

2.3. Խնդրում ենք ներկայացնել հաշվետու ժամանակահատվածում քաղած դասերը և/կամ ծագած խնդիրները, որոնք խոչընդոտել են միջոցառման գործողությունների իրականացմանը:

Հաշվետու ժամանակահատվածում շատ են եղել շահառու երեխաների տվյալների փոփոխություններ՝ ծառայությունից ծնողների հրաժարվելով պայմանավորված:
Որոշ ծնողների կողմից հանդիպող դիմադրությունը դանդաղեցրել է շահառուների սպասարկման գործընթացը: Նաև իրավիճակները հաղթահարելու նպատակով մասնագետի կողմից

կազմակերպվել եբ հանդիպումներ, քննարկվել են նման դեպքերը և առանձնացվել են լավագույն լուծումներ յուրաքանչյուր դեպքին համապատասխան:

2.4. Խնդրում ենք թվարկել հաջորդ հաշվետու ժամանակահատվածի համար նախատեսված գործողությունները (կցելով նաև շահառուների ցուցակը):

- կենցաղային սպասարկում
- բժշկական օգնություն և սպասարկում
- սոցիալ-հոգեբանական օգնություն
- մշակութային բնույթի ծառայությունների և միջոցառումների կազմակերպում
- խորհրդատվական օգնություն

2.5. Խնդրում ենք նշել, Ձեր կողմից իրականացված այն գործողությունները, որոնք նախատեսված չեն եղել միջոցառման աշխատանքային պլանով, բայց իրականացվել են միջոցառման նպատակին հասնելու համար:

Բազմամասնագիտական թիմի կարողությունների զարգացման նպատակով իրականացվել և պարբերաբար իրականացվում են վերապատրաստումներ, որի շնորհիվ ամենօրյա խնամք իրականացնող մասնագետները յուրացնում են փափուկ հմտություններ՝ շահառուի տանը պատշաճ կերպով խնամք իրականացնելու համար:
Կազմակերպվում են նաև հատուկ հանդիպող հիվանդությունների առանձնահատկությունները բացահայտող դասընթացներ, ինչպես նաև փորձի փոխանակման շաբաթական հանդիպումներ:

Ձևաչափ

# ԵՌԱՄՍՅԱԿԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

---------------------------------------------------- հաշմանդամություն ունեցող երեխաների տնային խնամքի ծառայությունների (կազմակերպության անվանումը) վերաբերյալ

| հ/հ | Մատուցվող ծառայության անվանումը | Ծառայություն ստացած անձանց թիվը |
|---|---|---|
| 1. | հաշվետու ժամանակահատվածի՝ սկզբում/վերջում շահառուների թվաքանակը | 37 |
| 1.1 | այդ թվում՝ իգական | 11 |
| 1.2 | 0-6 տարեկան | 12 |
| 1.2.1 | այդ թվում՝ իգական | 4 |
| 1.3 | 6-15 տարեկան | 23 |
| 1.3.1 | այդ թվում՝ իգական | 6 |
| 1.4. | 15-18 տարեկան | 2 |
| 1.4.1 | այդ թվում՝ իգական | 1 |
| 2. | Ըստ գնահատված կարիքի՝ դասակարգված խմբերում ընդգրկված շահառուների թվաքանակը (Ա/Բ). *նշել յուրաքանչյուր խմբում ընդգրկվածների թիվը* | Ա – 5<br>Բ - 32 |
| 3. | կենցաղային սպասարկում. | 37 |
| 4. | բժշկական օգնություն և սպասարկում. | 37 |
| 5. | սոցիալ-հոգեբանական օգնություն | 37 |
| 5.1 | այդ թվում՝ մշակութային բնույթի ծառայությունների և միջոցառումների կազմակերպում | 6 |
| 6. | խորհրդատվական օգնություն | 37 |
| 7. | այլ ծառայություն (*նշել*) | |